

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Ռ. Գ. Ռ. Մ.

ՔՐԻՍՈՆԵԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՏՈՒԹԵԱՆ

(Տես յէջ 383)

ԱՄԵՆԱՅԻՆ ինչ կը հաւաստէ՝ թէ գետնադամբանաց ծագումն մինչեւ առաջին հալածանաց ժամանակն կ'ելնէ, իսկ շինութեան աշխատութիւնն հետզհետէ կը շարունակուի Դ, Ե, Զ, Է և Բ դարուց մէջ, այսինքն է մինչեւ Լամբարտաց արշաւանքը, սակայն այս վերջին ժամանակաց մէջ եղածն միայն նորոգութիւններ և նորանոր զարգագործութիւններ են, որոց նորոգութեան կնիքը ճանանալն զիրին է: Հ. Մարքի չանաց ցուցընել՝ որ հնթան նոսներն բնաւ մասն շունին գետնադամբանաց շինութեան, և ոչ իսկ պատփառն (rouzzolane), և որիշ շինուածքի նիթերը դուրս հանելու: Գետնադամբանաց հողոյն տեսակը, որ անյարձնար է արգասաքերութեան, և միանգամայն աննոնց կանանաւոր և ճարտարապետական ձեռն վճռական կերպով մը կը հաւաստէն՝ թէ զհաւասացեալս այս ստորերկրեայ աշխատութեանց մղողն միայն մէկ մտածութիւն մ'եղած է:

Մերձաւոր հաշուով կը համարին թէ գետնադամբանաց այլեւայլ գտտիկոններն 876 հազարներոր տարածութիւն ունենան, գոնէ վրայէ վրայ եղած ստորերկրեայ սրաններն, առանց յիշեցընելու այն արձանազրութիւնները ուրոնց ամէնքն ալ մեռելոց յարութիւնը կ'ակնարկեն. ինչպէս, նշեաց ի խաղաղութեան. Հանգեատ ի խաղաղութեան. Այժմանի եղեւ խաղաղութեան. բոլոր նկարներն և նշանակներն Քրիստոսի խորհուրդները կը յիշեցնեն մեզ: Երբեմն ասոնք հին կտակարանի անձինքներ և իրողութիւններն են՝ որոնք զԱւետարանը կ'ակնարկին. Երբեմն ալ հեթանոսական առասպելներէ փոխ առնուած կերպարանց են, ինչպէս, Որդիկո՞ս՝ որ իւր սրնգաւն վայրագ կենացինները կ'ամօքէ, և կամ հովուական ու ձկնորսական կենաց զանազան տեսարաններ. բաց ի սոցանէ կան նաև իրական կամ երևակայական կենացներ:

Սովորական առարկաներն ասանք են. Յովինան որ կիտեն կ'ելնէ. Դանիէլ ի գորքն առիծուց. խահակ. Հովիշն բարի. Քրիստոս գառնուկի կերպարանաց ներքեւ. և նայն իսկ Ս. կոռսի պատկերն: կը գտնուին նաև բազմաթիւ Խորհրդաւոր նմանութիւններ. Ծարաւած եղջերունք՝ որ կը նշանակէ մկրտութիւնը. Աքաղաղին՝ հսկողութիւնը. Աղաւենին՝ անմեղութիւնը.

Փիսնիկն՝ յարութիւնը. Նաև՝ կեանքը. Այսաւենին՝ մարափրոսի պատկը. Զուկէ՝ Փրկիչը. Այս յետին խորհրդաւոր նշանն յունարէն Շխուս բառէն յառաջ կու գայ, որ Քրիստոսի վերաբերեալ հետազոյ հինգ սկզբնատաերը կը կազմէ Իդոսու (Յիսուս), Խրιստօս (Քրիստոս), Թեօս (Աստուած), Կոս (Որդի), Տառդր (Փրկիչ):

Երբ հեթանոսներն գետնադամբանաց գաղտնիքը իմացան, քրիստոնեայք ալ որիշ բնական կամ արուեստական տեղուանքը ապահնեցան, որոնք և կոչուեցան, ա. Թաքըստոցք կամ Գաղտնեիք. Հոն մարտիրոսաց մարմինները կը զնէին. Խակ վերջը այս այս նախնական եկեղեցեաց վրայ բարձրացուցին մեծամեծ տաճարներ: Միջին դարու ճարտարապետքն ի յիշատակ այս աւանդութեան՝ եկեղեցեաց տակ գետնափոր մատուններ կը շինէին: Հին թաքըստոցաց մէջ յիշենք միայն Ս. Վիկոսորի և Մարտիրոսի պատկերներ, որոնք այնքան աւելի նշանաւոր են, որքան որ կը տեսնուին Հոն գետնազամբանաց խորհրդական նշաններն: Ահա այսպիսիք էին համաժանաց տաճեն եղած եկեղեցիք:

բ. Աղրիանոս կայսրն քրիստոնէից գէմ ունեցած նախազարմունքները մի կողմն թողով՝ անոնց համար բաւական թուով եկեղեցիներ շինել տուու, որոնք և կոչուեցան Ադրիանականք:

գ. Երբ կոտանդիանոսի ժամանակ եկեղեցին խաղաղութիւն գտաւ, քրիստոնեայց սկսան եկեղեցիներ շինել, որոնք յետոյ կոչուեցան հովովմէական Տաճարք:

Երկար ժամանակ կարծուեցաւ թէ հովովմէական տաճարաց նախատիպն եղած լինի քրիստոնէական եկեղեցեաց օրինակն: Սակայն Հովովմայ գետնագամբանները ուշի ուշով զննելով, հնախօսք այս կէտիս նկատմամբ ունեցած կարծիքնին շատ փոխեցին: Գրեթէ առանց ընդդիմութեան ամենին ալ կ'ընդունին որ այն գետնազամբանաց մէջ գտուած ստորերկիրայ մասաւոններն՝ որ կէս մը փորսւած են հողաքարին մէջ և կէս մը շինուած, ծառայած են իր օրինակ քրիստոնէական պաշտաման նախկին շինուածոց, եւ այս կարծիքը գրեթէ ընդունելի է ամենէն երևելի հնախօսաց:

Այս փոքրիկ ստորերկիրայ աղօթարաններն շատ մը բնադրշներ ունին, որ յետոյ աւելի զարգացան. ինչպէս յաղթական կամարն, ժամանունն, աւթուն կամ բեմն, սնարի խորանաձեւն, նոյնպէս երբեմն սեղանյն առջնի վանդակըն կամ գոգ խորանին: Այս նախնական եկեղեցեաց լաւագյն գաղափար մի կրնայ տալ 4042 ին Ս. Ազնեսի գերեզմանոցի մէջ գտուած մեծ մատուռն:

Այս ստորերկիրայ եկեղեցիներէն զատ, քրիստոնեայց խաղաղութեան ժամանակ կը ժողվուէին առանին աղօթարանաց կամ պարանաց մէջ: Մարտիրոսաց վկայաբանութիւնն և Լուկիանոսի մէկ խօսքն կը հաւասարէն մեզ զայդ. սա կը պատմէ թէ դիպուածով անծանօթ տուն մը զացած ըլլայ, և անոր վերին յարկը կ'ելնէ, որ ոսկեզօծ որմագրուազներով զարդարուած էր, նման Հովովոսի նկարագրած ՄԵՆԵՂԱՅՈՍի տան, և կը գտնէ հոն ոչ թէ

Հեղինէ մը , այլ յերկիր խոնարհած և տժգոյն մարդիկ : Գալլիենոս կայսրն յամի 260 շնորհեց քրիստոնէից 40 եկեղեցի , զորս ապա կործանեց Դիոկ-ղետիանոս (ՅՕՅ) . (Եւս . Եկ . Պամ .) :

Կոստանդիանոսէն վերջը եկեղեցիք տաճար անունը կը կրեն . այս կայսրն շատ հեթանոս մեհեաններ շնորհեց քրիստոնէից , կրօնական պաշտամունքնին կատարելու համար , և մի և նոյն ոճով եկեղեցիներ շինել տուաւ :

Նախկին եկեղեցեաց ձեւին նկատմամբ՝ չէինք կրօնար որոշ գաղափար մ'ու-նենալ , եթէ մօտ ատեններս նոր զիւտեր շըլլային : Արդէատեան ճանապար-հին վրայ գտուած փոքր տարածութեամբ տաճար մի կը ներկայացնէ մեր առջեւ ճիշդ օրինակ մի գետնազամբանաց սենեկիկներու կամ թագրատոցաց . որոյ ձեն քառակուսի է , երեք խորանով , երեք շիրիմներ ընդունելու համար , որը միանդամայն երեք սեղանք են :

Խակ մեծ տաճարներն սովորաբար զուգահեռական ձեւ ունէին , պիսաւոր կոնք մի և կրկին կողմնական թեւեր : Ասոնց երեք մաս բաժնուած էին . Անդաստակ կամ արտաքին գաւիթ , Մէջ կամ սրահն Արօնառ առ Լատինս՝ Նաւ (navis) , առ Յոյնս Տաճար (ναος) . Խորան , (suggestum) , առ Լատինս (abasis) առ Յոյնս Բիեմ (βῆμα) կամ (ερατειον) .

ա . Երկու կամ հինգ կամ եօթն սեանց վրայ հաստատուած արտաքին Գաւիթն կը յենուոր ճակտի պատին վրայ : Սեանց միջոց երկաթի գաւազանի մը վրայ կը կախուէին վարագոյններ հանդիսաւորութեանց համար : Ավաշխարող-ներն հոն կը կենային խոնարհած : Մեծ եկեղեցիներն երբեմն զարդարուած կ'ըլլային բազմաթիւ զափիթներով : Միջին կամ արեմնեան զափիթն կը կոչուէր նախագաւիթ : Հոն կը գտուէր մեծ աւազանն (աղբեր) , որ որ հաւատացեալք ձեռքերնին և երեսնին կը լուանային տաճարը մննելէն յառաջ :

բ . Գաւիթին առջեւ բացուող երեք դուներ կը մոցցնէին եկեղեցւոյ նա-տուն ներքին կոնքը , միջին դուռն կղերին համար էր , աջակողմեանն արանց , և ձախակողմեանն կանանց : Դէա 'ի խորանը տանող միջին կոնքն ազատ կը մնար , իսկ միւս երկուքն որոշ բաժանմանք զատուած էին , որպէս զի իրարմէ զատուին զրան մօտ կեցող ապաշխարովներն և երախայներն , նոյնպէս նաև սեղանոյն աջ և ձախ կողմերը կեցող կրօնաւորներն և կուսանքն :

գ . Կոնքէն վերջը կու զար եկեղեցւոյ ծայրի մասն՝ խորանն , բաժնուած 'ի կոնքէն զատով մի , և շրջապատուած վանդակով կամ շրջապատով մի : Խորանի զրանց առջեւն էր ամբիոնն կողմնակի (զոնէ 'ի Հոռոմ) : Այնպի-տոսաց նստարանքն էին ի ձախուէ կամ յաջմէ աւանդատան : Կղերի մաս մի՝ այսինքն , կիսասարկաւազգ , սազմոսասաց փոքր տատիճանաւորքն ամփունի մօտ զասին վարի կողմն կենային . քահանայց սեղանոյն շորս կողմը կը կե-նային կիսաբոլոր . խակ եպիսկոպոսական աթոռն՝ միս աթոռներէն աւելի բարձր խորանին գոզը կը գրաւէր և կը նայէր սեղանոյն վրայ , այնպէս որ բոլոր ծողավուրդն կարող էր տեսնել զինքը և լսել իւր ձայնը : Հոռվայ Ա . Կղե-մէսի տաճարն՝ որոյ շինութիւնն յառաջ է կ'ըսեն քան զկոստանդիանոս , կրնայ մերձաւոր գաղափար մի տալ հռովմէական տաճարի :

Երախայից կենալու համար տաճարներու մօտ և իրենց ճակատին առջեւ քառակուսի աշտարակ մի կը շինուէր՝ լըջապատն ալ բավերով։ Սովորաբար նախկին եկեղեցեաց և տաճարաց մօտ սակաւ միջոցաւ իրարմէ բաժնուած փորբիկ շէնքեր կը գտուէին, որոնք ընդհանրտապէս կլորածն կ'ըլլային և Մկրտարան կ'անուանուէին։ Բաց ի երկար քառակուսի տաճարներէն՝ ինչուան առաջին ժամանակներէ կը գտնուին քանի մը բոլորաձն եկեղեցիներ ալ։ Այսպիսի է զատ յայլոց, Հոռվայ մէջ Ա. Մտեքանոս-Բողորչի (Rotonda) եկեղեցին, նոյնպէս Ա. Գերեզմանն յերոսաղէմ։

Հինգերորդ դարու մէջ շինուած շատ մը եկեղեցիներ կան, որոնք ի մէջ այլ նորաձնութեանց, ունին նաև երկկողմեան թեւեր որ շէնքին յատակին խայի ձեւ մը կու տան։

Զ. Բիշզանդական ճարտարապետութեան զիխաւոր բնադրոշմներն են, բաց 'ի կամարէ և զմբէթէ, խոյակաձեւ սիւն՝ որ զբէթէ խորանարդ է և բիւզանդական ոճով զարդարուած զէմբէր, այսինքն է, արեւելեան նոխ պաստառներով, բարակ չուփայեղէններով, և զպանաձեւ ծալքերով։ Խոյակներն շատ անզամ զարդարուած են արծուափաններով, յոչկապարիկներով, սփինքսներով և ուրիշ երեւակայական կենդանիներով։ Կամարաքարանց զրուազի, պասկաց, և մանաւանդ քուոց վրայ կը գտնուին ծակոտիկն հիւսուածով նկարներ, խառնամանուած զարդեր և արմաւենոյ տերեւի նման քանդակներ, նաև յաճախութիւն մի տարաշխարհիկ տնկոց։ Նոյնակս Ասորեսուանի հին շինուածոց և կորդովայի մզկիթներու մէջ գտնուած երեր կամ հինգ ծայրերով կտրասուած կամարներն՝ արղինքն են բիւզանդական վաճառաբերութեանց։ Այսպիսի էր ահաւասիկ եկեղեցեաց ձեւն։ Ընդպրածակ քառանկեան մի մէջ՝ որուն կողմերն դուրս կ'երկննային շորս ամենակարծ և հաւասարաշափ թևերով։ Կը գտուէին շորս կամարներով իրերաց հետ կապուած շորս սիւներ որոց վրայ կը յենուին անոնք ։ Այս կամարաց գմբէթարդներն այնպէս յարմարցուած էին որ անոնց հետ ՚ի միասին իրենց գագաթը բոլորակ մի կը ձեւացնէին՝ որ և զմբէթ մի կը կրէր վրան։ Կիսա-գմբէթներն կը գոցէին կամարները։ Որոց վրայ կը յենուր զիխաւոր գմբէթն, և կը պասկէին խաչին շորս թեւերը։ Այս թեւերէն մին որ վիխաւոր մուսքով մի կը վերջանար, ունէր գտւիթ կամ նախագաւիթ մի։ Ներհանկ կոնքն կը կազմէր սրբարանը, մինչդեռ կողմնական թեւերն իրենց բարձրութեան մէջ սրահով մի բաժնուած էին, որ կանանց համար սահմանուած էր։

Ա Սոփիա եկեղեցին հրաշակերս մ'եղած յիներով նոր ոճին և ընդունելի օրինակ մի բիւզանդական եկեղեցեաց, ('ի բաց առեւել մի քանի թեթև փոփախութիւնները), կ'արժէ զանեա համառօտիւ նկարագրել զայն։

537 տարւոյն վերջն՝ տեսաւ կ. Պոլիս հոչակաւոր տաճարիս նաւակաւեաց հանգէսն, զոր կանգնեց քրիստոնէութիւնն յԱբեւելու։ Ա. Սոփիա եկեղեցին զոր շինած էր կոստանդ և նորոզած Փոքրն թէոզոս և ասպա հըրգեհէ մի յետոյ զարդարած էին ամէն կայսերը, 53 Ձեւ յունուար ամսոյ կատաղի աւաստամբութեամբ մի բոլորավին մօիկիր զարձեր էր։

Յուստինիանս խոկոյն ձեռք զարկաւ՝ զայն վերստին շինելու, ոչ եթէ առաջնոյն պէս՝ այլ այնպիսի շքեղութեամբ որ աշխարհիս ամենէն գեղեցիկ շէնքերէն մին ըրաւ։ Անթեմիոս Տրալլացի՝ նոյն ժամանակի ամենէն յաջողակ ճարտարապետն, պատրաստեց նորա յատակագիծը և սկսաւ գործը. բայց նա առաջին հիմունքները զննելով լախճանեցաւ, ուստի խիդորոս Միլետացի աւարուեց զայն։ Հնագէտը քննելով տեսան որ զրուած յատակագիծն շատ աւելի գեղեցիկ եղաւ շէնքին կատարումը։

Կ. Պոլոյ Աւգոստուս կոչուած մեծ հրապարակէն կ'երթըցուէր քառակուսի պալատ մի, որ շըլապատուած էր չորս զաւիթներով, որոյ մէջ կար ցայտող յոյ աւազան մի, ուր Յոյներն իրենց սոլզորութեան համեմատ եկեղեցի մըտնելէն յառաջ երեսնին և ձեռքերնին կը լուանային։ Երկին զաւիթները կըտրել անցնելէն յետոյ՝ կը մոցուէր ինն գոներով եկեղեցին։ Ըստ հին սովորութեան դէպ 'ի արևելք զարձած էր շէնքն, ձեն քառակուսի, աելի երկայն քան թէ լայն։ Գրեթէ 84 մետր երկայնութիւն ունէր, 76 մետր լայնութիւն, և 47 մետր բարձրութիւն, առանց հաշուելու 36 մետր տրամագիծ և 53 մետր բարձրութիւն ունեցող գմբէթն։ Բովանդակ շէնքն կը հանչէր 8 խոշոր կամարակալ խարսխաց և քսանիւութ զանազան զոյներով մարմարիոնէ սեեանց վրայ։ Լոնքն ծայրից բալորուելովն ձուածեւ մի կը կազմէր։ որուն իրեք կողմանց երկայնութիւնն բարձր սրահի մը վրայ կը նայէր, ուր միաբան կը կենացին կանայք, օրովհեան, ինչպէս որիշ արևելեայց, ասանկ նաև յոյն եկեղեցեաց մէջ նոքս զատուած կը կենան յարան։ Սեանց խոյակներն պէնձագոյն կամ արծաթազօծ էին։ Ամենազեղեցիկ մարմարիոններն որովք որմերն զարգարուած էին, մարմարիոնէ և պարփիք շինուած միաշափ բաժանումներն որոնց կը կազմէին տաճարին սալայատակը, ոսկին, արծաթն, գոհարեղէնցն և միւմիոնն կամարաց, նոյնպէս ամէն տեսակ ձեռքով ազնիւ մետաղներէ յօրինուած բազմաթիւ կանթեղներն, ամենուն աշեգըր կը շացընէին։

Թաճախ եղած գետնաշարժներէ գմբէթն շատ տեղերէ ճեղքուեցաւ և ընկաւ 'ի կողմն արեւելեան՝ մինչգետ կը նորոգէին զայն։ Սակայն Յուստինիանոս վերստին շինել տուաւ զայն խիդորոսին, որ էր եղբօրորդի առաջին ճարտարապետին։ Ճաճարն առաջինէն եօթն մետր աւելի բարձր շինուեցաւ, և

1. Մերազնեայ երեւելի ճարտարապետն և հնարագէտն Տրդատ։ որոյ մեծամեծ գործոց վիշտը և կուռլը գտնելով յէլօ ազգային պատմութեան, կը պահշանամք նորա հմտութեան և հանճարոյն զարմանալի արդեանց վրայ։ և այս ոչ միայն ի մեր աշխարհս այլ և առ Յոյնո՞ որ ծնող և մայր կ'անուանին այս արուեստին։ — Վասիլ կայսեր ժամանակ՝ որ է, ի թուին 989-90 կը նորոգէ Ս. Սոփիա տաճարին գմբէթը, որ նոյնպէս երկրաշարժէ վնասուած էր։ և Շինող կաթողիկէին (Անոյ) և նմանեացն ի Հայոս և կանգնող կոնաձեւ գմբէթաց Տըրդատ, հրաւիրեալ լինէր ի կ. Պոլիս կարկատել և զնոյակապ բալորածաւալ զըմբէթն Ս. Սոփիայ, որում ոչ լինէին ձեռնէաս յայնժամ բիւլանդիկ ճարտարքն Յուստինաց։ (Երակ. Տեղագր. էլ 95)։

հրգեհներէ զգուշանալու համար՝ Յուստինիանոս բնաւ աստաղձի փայտէր չգործածեց, մարմարիոնէ երկայն տախտակներով դրցել առևաւ կամարը:

Երբոր Ս. Ասփիայ տաճարն աւարտեցաւ, ուղեցին հրաշալի Հքեղութեամբ մի զարգարել նորա բոլոր արտաքին երեսը, բոլոր որմերն թանկագին մարմարիոններով զարդարուած էին, խոյակներն և պսակներն ուկեզօծուած, կողմէն նական թեու կամարներն մամածեփ, գմբէթն աելի ևս զեղեցկացած ու կեզօծ և գունաւոր միւսիոնավէ: Ընդհանրապէս բոլոր նկարներն ուկի յատակի վրայ էին, որ բնազրոշմ մ'է բիւզանդական բազմագոյն ճարտարապետութեան. որոնք կը գոռոին նաև Գաղղիոյ եկեղեցեաց մէջ ի գարս գլուխ և գլուխ մանաւանդ Սիկիլիոյ և խոալիոյ մէջ:

Բաց աստի ի Ս. Ասփիա կար ամբաւ ճողովութիւն թանկագին անօթոց և բազմաստեղն ճրագրանաց: Տիւեց 16 տարի Ս. Ասփիայ տաճարին շինութիւնն, կայսրն ուգեց որ նոր շէնքին նաւակատիրն մեծահանգէս կատարուի. և ինքն իսկ զարմանքով գոշեց. « Փառք Աստուծոյ, որ արար զիս արժանի, կատարել զայս գործ, յաղթեցի քեզ, Աղոստինի » :

Շարայարելի

ԻՇԽԱՆԱՑ ԿՂԶԻՔ

(Տես յէջ 340)

ԱԱՅԻ 4. 808, Նիկեփոր Ա. Լողոթէտր, նոյնը՝ որուն մահը պատմեցի, Պոլղարաց որոպայթի մը մէջ, և որ զեռ նոր գահէն վար առեր էր իրէնէ կայսրուհին, ձիով պարտելու ատեն Քաղկեդոնի շրջակայքը, ինկա ձիէն և ուրը կոտրեցաւ: Քանի մը շարաթ անկողինը մնաց, և զեռ նոր աղէկնալ սկսած էր, երբ որ ամառուան կիսուն յուղիսի 49ին գէշ լուրեր առնով այլայլեցաւ:

Նիկեփորս ժողովրդեան շատ ատելի եղած էր իր զրած ծանր հարկերուն համար. առէ օգուտ քաղելով զինուօրք՝ կայսր հրատարակեցին Արեւելեան կամ Անատոլիի ընդհանուր հրամանասարր, միայն կապագովիկայ բանակը (¹) մասնակից շեղաւ այդ ապստամբութեան: Այս մարդն էր Վարդան պատրիկը որ երևելի զօրավար մ'էր, և Թուլք կ'անուանէր:

1. ՈՐ ՀԱՅ գօրքերէ կազմեալ. էր: